

Մայիսի 1-ին ևս մեկ մանկապարտեզ բացվեց Կոտայքի մարզի մեկ այլ համայնքում՝ Գեղաղիքում

Մայիսի 1-ին Կոտայքի մարզում ժամանակակից չափորոշիչներին համապատասխան ևս մեկ լուսավոր մանկապարտեզ բացվեց:

Գեղաղիք համայնքում մանկապարտեզի բացման արարողությանը ներկա էին Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը, ՀՀ Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը, Գեղաղիք համայնքի ղեկավար Հրաչյա Սարգսյանը, հարևան համայնքների ղեկավարներ, մանկապարտեզի նորոգման, կահավորման գործում լուրջ աջակցություն ցուցաբերած բարերարներ:

Դիմելով ներկաներին՝ մարզպետը հայտնել է, որ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գերխնդիրը շարունակում է մնալ մարզի բոլոր բնակավայրերում նախադպրոցական կրթության հաստատությունների հիմնումը, հիմնանորոգումը, բարեկարգումը. «Այս հաստատություններն են, որ կերտում են արժանապատիվ քաղաքացիներ: Նախադպրոցական կրթություն ստացած մեր փոքիկն իր մանկության, պատանեկության, երիտասարդության շրջանում ավելի գիտակից և քաղաքացիակենտրոն է լինում ու առաջնորդվում է պետական շահով: Երաշխավորում եմ, որ անելու ենք անհնարինը, որպեսզի այս մանկապարտեզը ֆինանսավորման խնդիր չունենա և անխափան գործի», -ասել է մարզպետը:

Մանկապարտեզի հանդիսավոր բացմանը ներկա ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը ևս շնորհավորել է գեղաղիքցիներին մանկապարտեզի բացման կապակցությամբ՝ նախադպրոցական կրթությունը համարելով կրթական համակարգի կարևորագույն օղակներից մեկը:

Բացման հանդիսավոր արարողությունից հետո հյուրերը շրջել են մանկապարտեզում, ծանոթացել մանկապարտեզի պայմաններին և հնարավորություններին:

Վերջին տարիներին առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրերով մանկապարտեզը կապիտալ վերանորոգվել էր, իսկ 2018 թվականի նոյեմբեր ամսին Տարածքային Ջարգացման Հիմնադրամի և մասնավոր ներդրողների կողմից ձեռք է բերվել գույքը, ինչը վերջնականապես թույլ է տվել մայիսի 1-ից սկսել մանկապարտեզի գործունեությունը: Այն գործելու է երկու խմբով՝ նախատեսված շուրջ 60 սանի համար Գեղաղիք, Ողջաբերդ, Հացավան համայնքերից: